ՀԱՐՑԱՇԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հարց 1.
Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով՝

Աշխատողի և գործատուի միջև ծագում են աշխատանքային հարաբերություններ:
(հոդ. 14, մաս 1)

Հարց 2.
Փորձաշրջանի ընթացքում՝

Աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով:

(հոդ. 91, մաս 2)

Հարց 3.
Աշխատողն իր պարտականությունները կատարում է՝

Անձամբ:
(հոդ. 103, մաս 2)

Հարց 4.
Արգելվում է աշխատողին փոխադրել՝

Նրա առողջական վիճակին հակացուցված աշխատանքի:
(հոդ. 106, մաս 2)

Հարց 5.
Գործատուն աշխատողին չի թույլատրում կատարել իր աշխատանքային պարտականությունները և չի վճարում աշխատավարձ, եթե՝

Աշխատողը գտնվում է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:
(հոդ. 108, մաս 1)

Հարց 6.
Աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

Այդ մասին առնվազն երեսուն օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին:
(հոդ. 112, մաս 1)

Հարց 7.
Աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու՝

Ոչ ուշ, քան այն ներկայացնելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:
(հոդ. 112, մաս 3)

Հարց 8.
Գործատուի պահանջով արտաժամյա աշխատանքը՝

Իրար հաջորդող երկու օրվա ընթացքում չպետք է գերազանցի 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը:
(հոդ. 146, մաս 1)

Հարց 9.
Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը՝

Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:

(հոդ. 159, մաս 1)

Հարց 10.
Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է՝

Տվյալ աշխատանքային տարում:
(հոդ. 164, մաս 1)

Հարց 11.
Կարգապահական տույժը կարող է հանվել՝

Մինչև մեկ տարին լրանալը, եթե աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:

(հոդ. 230)